ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՇՄԱՔ-ԳՀՇՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի բացման նիստի

ք. Արթիկ 20.12.2018թ. ժամը 14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կարախանյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ս.Տոնոյան, Ա.Տոնոյան, Ա.Կնյազյան, Հ.Կարախանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Ռափյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(զեկուցող՝ Ա. Կարախանյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:
3. Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին:
4. Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:
5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:
6. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:
7. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
8. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:

(զեկուցող՝ Ա. Կարախանյան)

1. Ընդունել ի գիտություն, որ

Սահմանված ժամկետում գնանշման հարցման ընթացակարգին համապատասխան հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանումը	Էլ. փոստի հասցե
1	«Արթիկի կոմունալ տնտեսություն» ԲԲԸ	artikikomunal@gmail.com
2	<<Շինարար Նարե>> ՍՊԸ	shinarar.nare@gmail.com

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3.Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին:

(զեկուցող՝ Ա. Կարախանյան)

Հրավերի պահանջներին համապատասխան հայտեր (որոնց Armeps համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր), կազմել և ներկայացրել են հետևյալ մասնակիցները՝ «Արթիկի կոմունալ տնտեսություն» ԲԲԸ –ն և <<Շինարար Նարե>> ՍՊԸ-ն :

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0;

4.Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:

(զեկուցող՝ Ա. Կարախանյան)

Հրավերով սահմանված պայմաններին համապատասխան փաստաթղթեր կազմել և ներկայացրել է «Արթիկի կոմունալ տնտեսություն» ԲԲԸ -ն:

<<Շինարար Նարե>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն հրավերի առաջին մասի 7.19 ենթակետի պահանջների և ներկայացված փաստաթղթերի միջև:Մասնավորապես՝ <<Շինարար Նարե>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը,այդ թվում նաև գնային առաջարկը ,ստորագրված և հաստատված են կնիքով , այնինչ պետք է հաստատված լինեին էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526 –Ն որոշման Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետով, 32-րդ կետի 12-րդ ենթակետով, <<Շինարար Նարե>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի առաջին մասի 7.19 ենթակետի պահանջներին:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5.Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:

(զեկուցող՝ Ա. Կարախանյան)

1.Ընդունել ի գիտություն, որ.

Գնման առարկա է հանդիսանում Արթիկ համայնքում աղբահանության ծառայությունների մատուցումը: Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Մասնակիցներ	Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները	
		ՀՀ դրամ	
		Գինն առանց ԱԱՀ	Ընդհանուր
1	«Արթիկի կոմունալ տնտեսություն» ԲԲԸ	21522050/քսանմեկ միլիոն հինգ հարյուր քսաներկու հազար հիսուն/դրամ	21522050/քսանմեկ միլիոն հինգ հարյուր քսաներկու հազար հիսուն/դրամ
2	<<Շինարար Նարե>>ՍՊԸ	18690000/տասնութ միլիոն վեց հարյուր իննսուն հազար/ դրամ	18690000/տասնութ միլիոն վեց հարյուր իննսուն հազար/ դրամ

<<Շիանարար Նարե>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:

(զեկուցող՝ Ա. Կարախանյան)

1. <<Շինարար Նարե>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված չլինելու պատճառով:
2. ՇՄԱՔ-ԳՀԾՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգում առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Արթիկի կոմունալ տնտեսություն» ԲԲԸ -ին՝ որպես բավարար գնահատված հայտ ներկայցրած մասնակցի նախապատվություն տալու սկզբունքով:

3. Էլեկտրոնային եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7.Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
(զեկուցող՝ Ա. Կարախանյան)

Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:
Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին
(զեկուցող՝ Ա. Կարախանյան)

Հաստատել գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման հետևյալ ժամանակացույցը.
Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից եզրակացության ստացման օրը, ժամը 14:00-ին:
Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝		Ա. Կարախանյան
Հանձնաժողովի անդամներ՝		Ս.Տոնոյան
		Ա.Տոնոյան
		Ա.Կնյազյան
		Հ.Կարախանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		Ա.Ռափյան